Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 24

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<24>> հոկտեմբերի 2022թ. քաղաք Երևան

2022 թվականի հոկտեմբերի 24-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար
Ս. Բաղինյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը:

Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 12 հայտերի քննարկում:

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

1.1 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Մարինե Անտոնյանի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հոկտեմբերի 3-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 3-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնային սարքավորումների պարբերական վկայագրման տեսակի ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 29/33 հասցեում:

Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Տ. Գասպարյանի և Ա. Ստեփանյանի կողմից՝ արտադրական տարածքում:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՄԱՐԻՆԵ ԱՆՏՈՆՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.2 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Հասմիկ Ժորայի Էվինյանի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի սեպտեմբերի 30-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հոկտեմբերի 7-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների

տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի սեպտեմբերի 30-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնային սարքավորումների պարբերական վկայագրման տեսակի ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, Տավուշի մարզ, Այրում համայնք, Գ. Բագրատաշեն, 19-րդ փողոց 63 հասցեում:

Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել է ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակիցների կողմից, որի վերաբերյալ տեղեկությունը տրամադրվել է 18.10.2022թ. մտից 54199-2022 գրությամբ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՀԱՍՄԻԿ ԺՈՐԱՅԻ ԷՎԻՆՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.3 Քննարկվեց՝

«Դանիելա-333» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հոկտեմբերի 6-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 6-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնային սարքավորումների պարբերական վկայագրման տեսակի ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, ք. Երևան, Սովխոզային փողոց 72 հասցեում:

Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԴԱՆԻԵԼԱ-333» ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.4 Քննարկվեց՝

«Ասման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հոկտեմբերի 14-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 6-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնային սարքավորումների պարբերական վկայագրման տեսակի ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Վայք, Ա. Մելիքյան փողոց 3 հասցեում:

Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակիցների կողմից, որի վերաբերյալ տեղեկությունը տրամադրվել է 24.10.2022թ. մտից 50037-2022 գրությամբ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԱՍՄԱՆ» ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.5 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Գարիկ Լևոնի Բաղդասարյանի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի սեպտեմբերի 28-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հոկտեմբերի 5-ին և 20-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի սեպտեմբերի 28-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և

գազաբալոնային սարքավորումների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու հայտ՝ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Երևան-Երասխ մայրուղի 11 հասցեում:

Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Տ. Գասպարյանի և Ա. Ստեփանյանի կողմից՝ արտադրական տարածքում: Ուսումնասիրության հետևանքով արտադրական տարածքի կահավորման վերաբերյալ լրացուցիչ նյութերը Կազմակերպությունը ներկայացրել է 20.10.2022թ. N54798-2022 մտից գրությամբ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԳԱՐԻԿ ԼԵՎՈՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.6 Քննարկվեց՝

«Դ.Վ Ավտոկոնտրոլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հոկտեմբերի 5-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 5-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնային սարքավորումների պարբերական վկայագրման տեսակի ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, Թբիլիսյան խճուղի 10/1 հասցեում:

Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել է ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակիցների կողմից, որի վերաբերյալ տեղեկությունը տրամադրվել է 19.10.2022թ. մտից 54625-2022 գրությամբ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«Դ.Վ ԱՎՏՈԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.7 Քննարկվեց՝

«Հունակոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հոկտեմբերի 15-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հոկտեմբերի 23-ին, 28-ին և օգոստոսի 10-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 15-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնային սարքավորումների պարբերական վկայագրման տեսակի ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն 3-րդ թաղամաս 19/3 հասցեում:

Կազմակերպության կողմից ներկայացված հայտի և հայտին կից փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո, 22.09.2022թ. թիվ ԱՍ/25.1/25156-2022 գրությամբ տեղեկացվել է հայտին կից փաստաթղթրում առկա թերությունների վերաբերյալ: Կազմակերպությունը ներկայացրել է 23.09.2022թ. մտից 49656-2022 գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութերէ մասնավորապես՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը: Նոր նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը լրացած է և անհրաժեշտություն է առաջանում հիմնավորել, որ պայմանագրի կողմերի կողմից վարձակալության պայմանագիրը դադարեցված չէ, որի մասին Կազմակերպությանը տեղեկացվել է լրացուցիչ գրությամբ: Կազմակերպությունը 18.10.2022թ. 54374 -2022 մտից գրությամբ ներկայացրել է Կադաստրի կոմիտի պարզաբանումն առ այն, որ վարձակալության իրավունքի ժամկետը լրանալուց հետո այն չի դադարեցվել:

Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՀՈՒՆԱԿՈՄ» ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.8 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Ասատուր Հակոբյանի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի սեպտեմբերի 22-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հոկտեմբերի 21-

ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման տեսակի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի սեպտեմբերի 22-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Երևանյան փողոց 51 հասցեում:

Լիցենզավորման հանձնաժողովի նիստի մասնակցում էին Ասատուր Հակոբյանը և Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Արմեն Աբգարյանը:

Արմեն Աբգարյանը նշեց, որ ՀՀ օրենսդրությամբ Արմավիր քաղաքի Երևանյան փողոց 51 հասցեում գտնվող գույքը ԱՁ Ասատուր Հակոբյանին է տրամադրվել կառուցապատման իրավունքով, որի նկատմամբ կառուցապատողը ունի տիրապետման և օգտագործման իրավունք: Իսկ ՀՀ կադաստրի կոմիտեի 20.10.2022թ. գրությամբ պարզաբանվում է, որ եթե կառուցապատողը հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունք ունեցող անձն է, ապա հողամասի վրա առկա շինությունները գրանցվում են տիրապետման և օգտագործման իրավունքով և այդ մասին նշվում է վկայականի լրացուցիչ նշումներ դաշտում:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԱՍԱՏՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.9 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Ժորժիկ Աշոտի Համբարձումյանի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի սեպտեմբերի 24-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հոկտեմբերի 3-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի սեպտեմբերի 9-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո 15.09.2022թ. ԱՍ/25.1/24562-2022 գրությամբ

հայտատուին տեղեկացվել է լիցենզիայի տրամադրման հայտում և հայտին կից ներկայացված փաստաթղթերում առկա թերությունների վերաբերյալ մասնավորապես՝

1.Բացակայում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 8-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ լիցենզիա ստանալու մասին հայտը՝ համաձայն N 2 ձևի՝ նշելով անունը, հայրանունը, ազգանունը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը, բնակության և գործունեության իրականացման վայրը, էլեկտրոնային փոստի հասցեն, գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել և արտադրական բազայի հիմնական տեխնոլոգիական սարքավորումներով հագեցվածության մասին տեղեկանքը՝ համաձայն N 6 ձևի:

2.Առկա չէ ԳԲՏՓԿ արտադրական վտանգավոր օբյեկտի ռեեստրում գրանցման վկայականի պատճենը:

3.Բացակայում է գազաբալոնային սարքավորումներ տեղադրելու և (կամ) պարբերաբար վկայագրելու աշխատանքների կատարման համար ներգրավվող բանվորական և ինժեներատեխնիկական անձնակազմի մասնագիտական որակավորման փաստաթղթերի պատճենները, տրամադրված Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև այն ուսումնական հաստատությունները կամ կազմակերպությունները, որոնց կողմից մշակված ծրագրերը և ուսումնական պլանները հաստատված են կրթության ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից:

Կազմակերպությունը 03.10.2022թ. մտից 51173 գրությամբ ներկայացրել է լրացուցիչ նյութեր: Ներկայացված նյութերի, ինչպես նաև լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից արտադրական տարածքում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ այն շինությունը, որտեղ, ըստ նախագծային փաստաթղթերի տեղակայված է ճնշարկային տեղամասը, ներառված չի Կազմակերպությանը տրամադրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22082022-04-0083 վկայականում, իսկ նույն վկայականով Կազմակերպությանը տրամադրված 99,8 քմ. տարածքում տեղակայված է վկայագրման տեղամասը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԺՈՐԺԻԿ ԱՇՈՏԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ	0 կողմ, 7 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.10 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Հովհաննես Աշոտի Ամիրյանի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի սեպտեմբերի 29-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական

վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի սեպտեմբերի 29-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո 10.10.2022թ. ԱՍ/25.1/26955-2022 գրությամբ հայտատուին տեղեկացվել է լիցենզիայի տրամադրման հայտում և հայտին կից ներկայացված փաստաթղթերում բացակայում է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «բ» ենթակետով սահմանված՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրում կամ գազաբալոնների պարբերական վկայագրում իրականացնելու համար նախատեսված արտադրական բազայի սեփականության կամ օգտագործման իրավունքի ձեռքբերումը հաստատող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ԱՁ Հովհաննես Ամիրյանի անվամբ վկայականի պատճենը: Առկա են միայն վարձակալության պայմանագիրը և «Էջմիածնի մաքրություն» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի վկայականը:

Միաժամանակ Կազմակերպությանը տեղեկացվել է, որ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը չի ներկայացրել լրացուցիչ նյութեր և չի վերացրել ԱՍ/25.1/26955-2022 գրությամբ նշված թերությունը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՇՈՏԻ ԱՄԻՐՅԱՆ	0 կողմ, 7 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.11 Քննարկվեց՝

«ՎԻ ԷՆԴ ՎԻ ԳՐՈՒՓ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հոկտեմբերի 4-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հոկտեմբերի 12-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական

վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 4-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո 11.10.2022թ. ԱՍ/25.1/26954-2022 գրությամբ հայտատուին տեղեկացվել է լիցենզիայի տրամադրման հայտում և հայտին կից ներկայացված փաստաթղթերում առկա են թերությունների վերաբերյալ, մասնավորապես առկա չէ ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 8-րդ կետի «բ» ենթակետով սահմանված՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրում կամ գազաբալոնների պարբերական վկայագրում իրականացնելու համար նախատեսված արտադրական բազայի սեփականության կամ օգտագործման իրավունքի ձեռքբերումը հաստատող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման «ՎԻ ԷՆԴ ՎԻ ԳՐՈՒՓ» ՍՊ ընկերության վկայականի պատճենը: 2022 թվականի հոկտեմբերի 12-ի 53166-2022 մտից գրությամբ Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր: Ներկայացված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 18082022-03-0077 վկայականի տվյալների համաձայն՝ Կազմակերպությանը վարձակալության իրավունքով տրամադրված հողամասի գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական է, իսկ շինությունների բնութագրում ներկայացված շինության տեսակը գրանցված է որպես աղաց, ինչը գյուղատնտեսական արտադրական շինություն է: Ըստ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 600-Ն որոշման Հավելված N 3-ով հաստատված արտադրական նպատակային նշանակության շենքերի, շինությունների դասակարգման ցանկի 3-րդ կետի՝ գյուղատնտեսական արտադրական շինությունները գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և դրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններ ապահովող շենքեր և շինություններ են:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՎԻ ԷՆԴ ՎԻ ԳՐՈՒՓ» ՍՊԸ	0 կողմ, 7 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի և 2021 թվականի ապրիլի 15-ի 600-Ն որոշման պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.12 Քննարկվեց՝

«ՊՐՈՖ-ԼԱԲ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հոկտեմբերի 4-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար

ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 4-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու մասին:

Կազմակերպության կողմից ներկայացված՝ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Արարատյան փողոց 20 հասցեում գտնվող արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կազմակերպության գազաբալոնների վկայագրման տեղամասում բացակայում է տրանսպորտային միջոցների մուտքի հնարավորությունը, առկա չէ գազաբալոնների փականների ու անցումային կցիչների ապամոնտաժման ու մոնտաժման կայանքը: Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեղամասը կահավորված չէ տեխնոլոգիական սարքավորումներով, տեղադրված չեն դարպաս, պատուհաններ, իսկ տարածքը անբարեկարգ է:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՊՐՈՖ-ԼԱԲ» ՍՊԸ	0 կողմ, 7 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու
քարտուղար Ա. Ստեփանյան